ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 01/15.2/16756-19 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալի օգնական *Մարիամ Հակոբյանին* 2019 թվականի հոկտեմբերի 17-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերում զբոսաշրջության ոլորտին առնչվող խնդիրների քննարկմանը մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**2019 թվականի հոկտեմբերի 16**
**ք. Հրազդան**
**N 198-Ա**